ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)

# ԾՐԱԳԻՐ

Կազմեց Է. Լ. Ջոհրաբյանը,
պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 930:93/94
ԳՄԴ 63.2+63.3
Կ 767

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ պատմության ֆակուլտետի*
*գիտական խորհուրդը*

**Կազմեց** պատմ. գիտ. թեկն., դոցենտ Է. Լ. Ձոհրաբյանը

Կ 767 Կովկասի պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) /Կազմեց Է. Լ. Ձոհրաբյանը: -Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 20 էջ:

Աղբյուրագիտության և պատմագրության այս ծրագիրը ներառում է Կովկասի ժողովուրդների մասին հին արևելյան, հունահռոմեական, հայկական, վրացական, բյուզանդական, եվրոպական, թուրքական, ռուսական և այլ աղբյուրներ, որոնց իմացությունն ունի նաև գործնական-քաղաքական այժմեական հնչեղություն: Ներկայացվում են նաև Կովկասի պատմագրության հիմնահարցերը:

ՀՏԴ 930:93/94
ԳՄԴ 63.2+63.3

ISBN 978-5-8084-2040-3

© ԵՊՀ հրատ., 2015
© Կազմողի համար, 2015

# ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, քննություն

## Դասընթացի գիտական կարևորությունը և հիմնական նպատակը

Դասընթացի նպատակն է ներկայացնել Կովկասի պատմության աղբյուրների հիմնական խմբերը, աղբյուրագիտական վերլուծության հիմնական սկզբունքները, մեթոդներն ու մեթոդաբանությունը, ուսանողներին գործնականում ծանոթացնել աղբյուրների հետ աշխատելու կոնկրետ եղանակներին: Շարադրել Կովկասի պատմության հետազոտության համառոտ ընթացքը: Հատուկ ուշադրություն դարձնել կովկասագիտական գրականության քննական վերլուծությանը:

**Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա Կովկասը բնակեցնող ժողովուրդների մասին ուրարտական, խեթական, պարսկական, հունահռոմեական, հայկական, վրացական, ասորական, բյուզանդական, արաբական, թուրքական, եվրոպական և այլ սկզբնաղբյուրները, կծանոթանա դրանցում առկա առանցքային պատմական տեղեկություններին:
2. Կհասկանա դրանց ուսումնասիրության ու գիտական շրջանառության մեջ մտցնելու հիմնախնդիրները:
3. Կկարողանա օգտվել Կովկասի պատմության սկզբնաղբյուրներից, պատկերացում կկազմի դրանց հետազոտման ասպարեզում ձեռքբերումների մասին:

**Բովանդակությունը**

**Թեմա 1**՝ Կովկասի պատմության աղբյուրագիտության ընդհանուր հիմնախնդիրները, **Թեմա 2**՝ Պատմական գործընթացները Կովկասում և դրանց լուսաբանումը պատմագրության մեջ, **Թեմա 3**՝ Կովկասի հին պատմության սկզբնաղբյուրները, **Թեմա 4**՝ Կովկասի միջնադարյան պատմության հայկական սկզբնաղբյուրները, **Թեմա 5**՝ Կովկասի միջնադարյան պատմության վրացական սկզբնաղբյուրները, **Թեմա 6**՝ Աղվանական մատենագրության հիմնախնդիրը: Աղվանքի պատմության սկզբնաղբյուրները, **Թեմա 7**՝ Կովկասի միջնադարյան պատմության ասորական, բյուզանդական, պարսկական, արաբական, թուրքական, եվրոպական ու ռուսական սկզբնաղբյուրները, **Թեմա 8**՝ Կովկասի նոր պատմության սկզբնաղբյուրները, **Թեմա 9**՝ Կովկասի պատմության պատմագրության սկզբնավորումը և առաջին քայլերը, **Թեմա 10**՝ Կովկասի պատմության պատմագրության արդի վիճակը և զարգացման միտումներն ու հեռանկարները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց՝ յուրաքանչյուրը 5 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

## Թեմա 1-ին
## ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Կովկասի պատմության սկզբնաղբյուրների տիպաբանությունը, դրանց հետազոտության փուլերը մասնագիտական գրականության մեջ։ Էթնիկական անվանումների գործածության առանձնահատկություններն անտիկ և միջնադարյան մատենագրության մեջ։ Էթնոնոմենկլատուրայի պայմանականությունը։ Էթնոնիմների ճանաչման դժվարությունները։ Ազգագրական, հնագիտական և բանահյուսական նյութերի քննության եղանակները, հավաստիության աստիճանը և համընդհանուր տարածում ձեռք բերելու հանգամանքով թելադրված՝ տեղայնացման դժվարությունները։ Բանավիճային հարցեր։

## Թեմա 2-րդ
## ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Կովկաս» հասկացությունը։ Կովկասի աշխարհագրական դիրքը և սահմանները։ Այսրկովկաս (եզրույթի խնդիրը), Այսրկովկաս և Հյուսիսային Կովկաս բաժանարար գիծը և նրա անդրադարձը տարածաշրջանի էթնոմշակութային նկարագրի վրա։ Կովկասը որպես միասնական պատմական տարածաշրջան։ Պատմական գործընթացի ընդհանուր օրինաչափությունները և տեղական առանձնահատկությունները տարածաշրջանում։ Կովկասի պատմության պարբերացումը։

Կովկասը բնակեցնող հիմնական էթնիկական միավորները։ Կովկասի էթնոլեզվական պատկերը. Կովկասյան ժողովուրդների դասակարգումն ըստ լեզվաընտանիքների և աշխարհագրական տեղաբաշխման։ Իբերակովկասյան լեզվաընտանիքի ժողովուրդներ։ Աբխազաադըղական, Նախոդաղստանյան ժողովուրդներ, Հնդեվրոպական լեզվաընտանիքի ժողովուրդներ, Ալթայան լեզվախմբի ժողովուրդներ։ Կովկասաբնակ ժողովուրդների պատմական ճակատագրերի ընդհանրություններն ու առանձնահատկությունները։ Կովկասյան մշակութային աշխարհը և նրա հիմնական կերտողները։

Կովկասում պատմական գործընթացների պատմագիտական արժևորումը:

## Թեմա 3-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կովկասը բնակեցնող ժողովուրդների, ցեղային միությունների և ցեղերի մասին վկայությունները ուրարտական, խեթական, պարսկական և հունահռոմեական սկզբնաղբյուրներում: Դպրությունները մինչքրիստոնեական շրջանում:

Քրիստոնեության մուտքը Կովկաս: Ազգային դպրությունների սկզբնավորումը Կովկասում: Հայաստան-Վրաստան-Աղվանք քաղաքական, տնտեսական ու մշակութային փոխառնչությունները մինչքրիստոնեական և քրիստոնեական շրջաններում, դրանց արտացոլումը սկզբնաղբյուրներում:

## Թեմա 4-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հայկական սկզբնաղբյուրների բացառիկ նշանակությունը Կովկասի ժողովուրդների պատմության և մշակույթի ճանաչման և ուսումնասիրության գործում: Հայ պատմագրությունը որպես Կովկասի վաղմիջնադարյան պատմության սկզբնաղբյուր: Հայ պատմական մատենագրության զարգացումը, նրա նշանակությունը Կովկասի զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի և ուշ միջնադարի պատմությունը հետազոտելու գործում: «Աշխարհացոյցը» որպես տարածաշրջանի վարչատարածքային բաժանման ու էթնիկական պատմության կարևորագույն հուշարձան: Միջնադարյան հայկական պատմագիտական, գրական, վարքագրական ու վկայաբանական հուշարձանների աղբյուրագիտական արժեքը, «Գիրք թղթոց» և «Կնիք հաւատոյ» ժողովածուները՝ որպես Կովկասի եկեղեցական պատմության սկզբնաղբյուր: Հայ վիմագրության և հայերեն ձեռագրերի հիշատակարանների նշանակությունը Կովկասի միջնադարյան պատմության հետազոտության գործում:

## Թեմա 5-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱՑԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Վրաց «Քարթլիս ցխովրեբայի» աստիճանական կազմավորումը: «Քարթլիս ցխովրեբայի» կազմում ընդգրկված հիմնական հուշարձանները: «Քարթլիս ցխովրեբայի» միջնադարյան հայերեն թարգմանության գիտական նշանակությունը:

Միջնադարյան վրացական վարքագրական ու վկայաբանական հուշարձանների աղբյուրագիտական արժեքը: Վրացական օրենսդրական հուշարձանները: Վրացական վավերագրերի պահպանված նմուշները, նրանց նշանակությունը համակովկասյան երևույթների և իրողությունների հետազոտության գործում: Վրացական վավերագրերի մատենաշարային հրատարակությունները: Վրացական ձեռագրերի և դրանց հիշատակարանների աղբյուրագիտական արժեքը: Վրացական վիմագրությունը որպես պատմական սկզբնաղբյուր: Վրացական վիմագիր հուշարձանները Հայաստանում և Հյուսիսային Կովկասում:

## Թեմա 6-րդ
## ԱՂՎԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ: ԱՂՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Աղվանքը հունահռոմեական սկզբնաղբյուրներում: Աղվանական գրի, գրչության և դպրության գոյության հարցը: «Աղվանական» կոչվող արձանագրությունները: Սինայի ձեռագրերում ի հայտ եկած նմուշներն ու դրանց վերծանությունից բխող եզրակացությունը:

Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) եզակի երկի աղբյուրագիտական արժեքը: Մխիթար Գոշի «Աղվանից երկրի ժամանակագրությունը»:

## Թեմա 7-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՍՈՐԱԿԱՆ, ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ, ՊԱՐՍԿԱԿԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ, ԹՈՒՐՔԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կովկասի միջնադարյան պատմության լուսաբանումն ասորական պատմագրության և սրբախոսական գրականության մեջ: Բյուզանդական սկզբնաղբյուրների նշանակությունը Կովկասի միջնադարյան պատմության լուսաբանման գործում: Արաբական մատենագրության հուշարձանները որպես Կովկասի պատմության սկզբնաղբյուր: Արաբական վիմագրությունը Այսրկովկասում: Արաբական գրի և գրականության առանձնահատուկ դերը Հյուսիսային Կովկասում: Թուրքական պատմական, աշխարհագրական երկերը, վիմագրերը և վավերագրերը՝ որպես Կովկասի միջնադարյան պատմության սկզբնաղբյուր: Միջնադարյան Կովկասի եվրոպական ու ռուսական սկզբնաղբյուրները:

## Թեմա 8-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արխիվային նյութերը Կովկասի նոր պատմության սկզբնաղբյուր: Կովկասի արխեոգրաֆիական հանձնաժողովի հրատարակությունները: Վավերագրերի հիմնական հավաքածուները Կովկասում: Փաստաթղթերի մատենաշարային հրատարակությունները: Փաստաթղթերի ընտրության և հրատարակության սկզբունքները, թեմատիկ ու ժամանակային ընդգրկում ունեցող ժողովածուները: Պարբերական մամուլը՝ որպես պատմական սկզբնաղբյուր: Հասարակական-քաղաքական մտքի հուշարձանների աղբյուրագիտական արժեքը: Կովկասի նոր պատմության աղբյուրների մեկնաբանության իրարամերժ հիմնական դրսևորումները:

## Թեմա 9-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Կովկասի ժողովուրդների լեզվի և պատմության վերաբերյալ հետաքրքրության առաջին դրսևորումները եվրոպական արևելագիտության մեջ: Մ. Չամչյանի, Ղ. Ինճիճյանի, Վախուշտիի պատմական ու տեղագրական աշխատությունների հանդես գալը: Մ. Բրոսեի գործունեությունը: Պ. Իոսելիանիի, Դ. Բաքրաձեի, Թ. Ժորդանիայի աշխատությունները և հրապարակումները: Վրաց ժողովրդի անցյալի արտացոլումը Ի. Ջավախիշվիլիի ու Ս. Կակաբաձեի աշխատություններում: Ավանդական ու քննական պատմագիտական պատկերացումներ: «Սախստորիո մոամբե» և «Քրիստոնյա Արևելք» պարբերականների դերը Կովկասի պատմության հետազոտության գործում: Կովկասի երկրների պետական կառուցվածքի և սոցիալական պատմության ուսումնասիրությունը Ի. Ջավախիշվիլիի և Ն. Ադոնցի աշխատություններում: Հյուսիսային Կովկասի ժողովուրդների պատմության հետազոտության անդրանիկ գիտական փորձերը:

## Թեմա 10-րդ
## ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Քննական պատմագիտության ծեռքբերումները Հայաստանում և Վրաստանում: Աղվանքի պատմության և էթնիկական նկարագրի հետազոտությունը կովկասագիտական գրականության մեջ: Հյուսիսային Կովկասի ժողովուրդների պատմության միահատորյակի և քառահատորյակի հրատարակությունները: Ազգային պատմագիտական դպրոցների հանդես գալը. մեթոդաբանական ընդհանրություն և վերաձևումների նկրտում: Ազգային պատմության ակադեմիական բազմահատորյակների ստեղծումը: Միասնական ինստիտուտների ու խնդիրների աստիճանական կորուստը: Պատմության քաղաքականացման աղետալի հետևանքները: Ընդհանրությունների գիտակցման հեռանկարները:

## Ռեֆերատների թեմաներ

1. Կովկասի հին պատմության սկզբնաղբյուրները
2. Կովկասի միջնադարյան պատմության հայկական սկզբնաղբյուրները
3. Կովկասի միջնադարյան պատմության վրացական սկզբնաղբյուրները
4. Աղվանական գրի և գրչության հիմնախնդիրը
5. Կովկասի միջնադարյան պատմության պարսկական, թուրքական և արաբական սկզբնաղբյուրները
6. Կովկասի միջնադարյան պատմության եվրոպական ու ռուսական սկզբնաղբյուրները
7. Կովկասի պատմության բանավիճային հարցերը մասնագիտական գրականության մեջ
8. Կովկասի նոր պատմության արխիվային նյութերը

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
### Սկզբնաղբյուրներ


1. **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, Երևան, 1983:
2. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965:
3. «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1994:
4. Դարեհ Վշտասպի Բիհեսթունյան արձանագրությունը, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Նալբանդյանի, Երևան, 1964:
5. «Դիվան հայ վիմագրության», պրակ 1-9, Երևան, 1966-2012:
6. **Թովմա Արծրունի**, Պատմություն տանն Արծրունյաց, Երևան, 1985:
7. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանությունը թուրքերեն բնագրից Հ. Ա., Կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1961:
8. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950:
9. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961:
10. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հ. 1, Երևան, 2000:
11. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար», Երևան, 1984:
12. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.», Երևան, 1988:
13. «Հայոց նոր վկաները», Վաղարշապատ, 1903:
14. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ դար», հատ Ա-Բ, Երևան, 1974, 1978:
15. **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկաշարյանի, Երևան, 1986:
16. **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Երևան, 1986:
17. **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982:
18. «Մանր ժամանակագրութիւններ», հատ. I-II, Երևան, 1951, 1956:
19. «Մատենագիրք հայոց», հատ. Ա-Ե, Անթիլիաս, 2003-2005:

20. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա-Գ, Երևան, 1934-1955: Վերահրատարակություն՝Երևան, 2013:
21. **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983:
22. **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860:
23. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983:
24. **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Երևան, 1985:
25. **Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
26. **Վարդան Արևելցի**, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1860:
27. **Ստեփանոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910:
28. Վրաց ժամանակագրություն, Երևան, 1971:
29. **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871:
30. «Գեորգիկա»-Բյուզանդացի մատենագիրների տեղեկությունները Վրաստանի մասին, հատ. 1-8, Թբիլիսի, 1961-1970 (վրացերեն):
31. **Վախուշտի**, Վրաստանի թագավորության նկարագրություն, Թբիլիսի, 1973 (վրաց.):
32. «Վրաց իրավունքի հուշարձաններ», հատ I-VIII, Թբիլիսի, 1963-1985 (վրաց.):
33. «Վրաց վիմագրության դիվան», հատ I-II, Թբիլիսի, 1980 (վրաց.):
34. **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, 1985:
35. «Քարթլիս ցխովրեբա», հատ. I-II, Թբիլիսի, 1955, 1959 (վրաց.):
36. **Քսենոփոն**, թարգմանությունը՝ Ս. Կրկաշարյան, Երևան, 1970:
37. «Քրոնիկներ», հատ. Ա-Գ, Թբիլիսի, 1892, 1897, 1967 (վրաց.):
38. Страбон, География в 17 книгах. //Перевод, статья и комментарии Г. А. Стратановского, М., Наука, 1964.

## Հիմնական գրականություն


1. «Հայ ժողովրդի պատմություն» (ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն), հատ I-VIII, Երևան, 1970-1984:
2. Բերձենիշվիլի Ն., Վրաստանի պատմության հարցեր, հատ I-IX, Թբիլիսի, 1964- 1979 (վրաց.):
3. Կեկելիձե Կ., Դրվագներ վրաց մատենագրության պատմությունից, հատ I-XIV, Թբիլիսի, 1956-1986 (վրաց.):
4. Թորոսյան Խ., «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը»՝ որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1972:
5. Մելիք-Բախշյան Ստ., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1996:
6. Մուրադյան Պ., Հայաստանի վրացական արձանագրությունները, Երևան, 1977:
7. Մուրադյան Պ. ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ Վրացիսն» թուղթը, Ս. Էջմիածին, 2011:
8. Չոբանյան Պ., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981:
9. Ջավախիշվիլի Իվ., Աշխատություններ տասերկու հատորով, Թբիլիսի, 1979-2000 (վրաց.):
10. Վրաց ժամանակագրություն, Թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971:
11. Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.
12. Акопян В. З., Народы Северного Кавказа: Исторический и этнодемографический очерк, Ростов-на-Дону, 1997.
13. Артамонов М. И., История хазар, Л., 1962
14. Бгажба О. Х., Лакоба С.З., История Абхазии. С древнейщих времен до наших дней, Сухум, 2007.
15. Волкова Н. Г., Этнический состав населения Северного Кавказа в 18-нач. 20-го века, М., 1974.

16. Дамения И. Х., Историография истории народов Кавказа XIX -начало XX вв., Санкт-Петербург, 1996.
17. Еремян С. Т., Сюния и оборона Сасанидами Кавказских проходов, Изв. Арм. ФАН СССР, 1941, № 7 (12).
18. Еремян С. Т., Моисей Каланкайтукский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хаканату Алп-Илитверу, ЗИВАН СССР, Т. VII, 1939.
19. История Дагестана, Т. I, М., 2004.
20. Какабадзе С., Некоторые вопросы изучения древнеармянской версии "Картлис Цховреба", "Кавказ и Византия", вып.1, Ереван, 1979.
21. Картлис цховреба. История Грузии, Тбилиси, 2008.
22. Климов Г. А., К состоянию дешифровки агванской (кавказско-албанской) письменности, Вопросы языкознания, № 3, 1967.
23. Кузнецов В. А., Введение в Кавказоведение (историко-политические очерки народов Северного Кавказа), Владикавказ, 2004.
24. Магамедов Р. М., История Дагестана с древнейших времен до конца XIX в., Махачкала, 1968.
25. Марр Н. Я., Кавказские племенные названия и местные параллели, Петроград, 1922.
26. Меликсет–Бек Л. М., Хазары по древнеармянским источникам в связи с проблемой М.Хоренского, Сб., В честь акад. Орбели В.А.-М.-JL: Изд.АН СССР, 1960.
27. Меликсет-Бек Л. М., Источниковедческие заметки, Ереван, 2010.
28. Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960.
29. Минорский М. Ф., История Ширвана И Дербента X-XI вв., М., 1963.
30. Народы Кавказа, Т.I, II, М., 1962.
31. Очерки истории Дагестана, Т.I, Махачкала, 1957.

32. Рамазанов Х. Х., Шихсаидов А. Р., Очерки истории Южного - Дагестана (с древ. Времен до начала XX века), Махачкала, 1964.
33. Сборник материалов для описания местностей и племен - Кавказа, вып. 1-34, Тифлис, 1881-1904.
34. Сборник сведений о Кавказских горцах, вып. 1-10, Тифлис, 1868-1881.
35. Сургуладзе И. И., История государства и права Грузии, Тбилиси, 1968.
36. Тревер К. В., Очерки по истории культуры Кавказской А-лбании (IV в. до н.э. – VII в. н.э), М.-Л, 1959.
37. Шихсаидов А. Р., Ислам в средневековом Дагестане (VII-XV), Махачкала, 1969.

## Լրացուցիչ գրականություն


1. Արևշատյան Ս. Ա., Հնագույն հայկական թարգմանությունները, (Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», № 1, 1972):
2. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա-Բ, Երևան, 1957, 1959:
3. Հովսեփյան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմության մէջ, Անթիլիաս, 1969:
4. Մխիթար Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, Աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի, «Գանձասար», Զ, Երևան, 1996:
5. Մուրադյան Պ. Մ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977:
6. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի գիտական կարևորությունը և հիմնական նպատակը........ 3

**Թեմա 1**
Կովկասի պատմության աղբյուրագիտության ընդհանուր հիմնախնդիրները ........ 5

**Թեմա 2**
Պատմական գործընթացները Կովկասում և դրանց լուսաբանումը պատմագրության մեջ ........ 5

**Թեմա 3**
Կովկասի հին պատմության սկզբնաղբյուրները ........ 6

**Թեմա 4**
Կովկասի միջնադարյան պատմության հայկական սկզբնաղբյուրները. 6

**Թեմա 5**
Կովկասի միջնադարյան պատմության վրացական սկզբնաղբյուրները ........ 7

**Թեմա 6**
Աղվանական մատենագրության հիմնախնդիրը: Աղվանքի պատմության սկզբնաղբյուրները ........ 7

**Թեմա 7**
Կովկասի միջնադարյան պատմության ասորական, բյուզանդական, պարսկական, արաբական, թուրքական, եվրոպական ու ռուսական սկզբնաղբյուրները ........ 8

**Թեմա 8**
Կովկասի նոր պատմության սկզբնաղբյուրները ........ 8

**Թեմա 9**
Կովկասի պատմության պատմագրության սկզբնավորումը և առաջին քայլերը ........ 9

**Թեմա 10**
Կովկասի պատմության պատմագրության արդի վիճակը. Զարգացման միտումներն ու հեռանկարները ........ 9

Ռեֆերատների թեմաներ........ 10

Գրականություն ........ 11

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**(հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)**

# ԾՐԱԳԻՐ

**Կազմեց Է. Լ. Ձոհրաբյանը,**
**պատմ. գիտ. թեկն., դոցենտ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 1.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1